


# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



## Եղիսէն, հրաշքներու մարդը



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen

Story 25 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)

*Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada*

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Բաւական եգեր չկային  
քաշելու համար Plow: Մէկ  
հատ եւս պէտք կար: Սակայն  
այդ չկեցուց երիտասարդ  
պարտիզպանը, որ Եղիսէ  
կը կոչուէր:




1

Ինքը մասնակցեցաւ  
եգրերուն հետ մէկ պակասին  
տեղը առնելով: Ան պէտք էր,  
որ զօրաւոր եւ խելացի  
տընաջան աշխատող  
մարդ մը ըլլար:



2



Երբ Եղիսէ կը հերկէր,  
Աստուծոյ մարգարէն  
Եղիան եկաւ եւ անոր  
կանչեց: Երիտասարդը  
ձգեց ագարակը եւ գնաց  
Աստուծոյ ծառան ըլլալու:  
Օր մը, Աստուած Եղիան  
երկինք բարձրացուց մեծ  
փոթորիկով մը:

Հիմա Եղիսէ ինքն  
էր Աստուծոյ  
մարգարէն  
հարայելի մէջ:

3



Թէեւ Եղիսէ տխուր էր, որ  
Եղիան գնաց, ան աղօթեց  
Աստուծոյ, որ իրեն Եղիայի  
սման ուժ տար, Եղիսէ վերցուց  
Եղիային վերարկուն եւ  
գարկաւ գետին

քալող ջուրը  
ինչպէս Եղիա  
ըրած էր:

4




Ջուրը բաժնուեցաւ,  
հիմա Եղիսէ գիտցաւ,  
որ Աստուած իր հետ է:

5




Երբ Եղիսէ Պեթել  
կոչուող քաղաքը  
կ'երթար, քանի մը  
երիտասարդներ  
անոր ծաղրեցին  
կանչելով զինք.  
"Վեր ել, դուն  
ճաղատ":

6




Անոնք  
կարելորութիւն  
չէին տար, որ  
Եղիսէ Աստուծոյ  
ծառան է:  
Սարսափելի բան  
մը պատահեցաւ  
անոնց: Երկու էգ  
արջեր եկան  
անտառէն եւ  
թակեցին  
քառասուներկու  
երիտասարդները:

7



Օր մը Եղիսէ  
հանդիպեցաւ  
այրի կնոջ մը,  
որ պարտք  
ունէր եւ չէր  
կրնար վճառել:  
Առնելու համար  
իր դրամը  
մարդը դրամի  
փոխարէն  
կնկան տղաքը  
իբր ծառայ  
պիտի առնէր.


8



"Գնա՛, երկու  
նոր կաթսայ բեր  
դրացիներուդ  
քովէն... պարապ  
կարասներ",  
ըսաւ Եղիսէ:  
Աստուած  
շնորհալի բան  
մը պիտի ըներ  
այդ կնոջ:


9

Այրի կնկան տան մէջ  
պզտիկ ամանի մը մէջ  
միայն քիչ մը ձեթ կար,  
սակայն ան այդ քիչ  
ձեթով լեցուց բոլոր  
այդ կաթսաները: Եթէ  
լոգանքի ամաններ  
ունենային, կը կարծե՞ս  
որ Աստուած կը լեցներ  
ատոնք ալ: Այրի կինը  
ծախեց այդ ձեթերը եւ  
ազատեց իր զաւակները:




10

Ուրիշ կին մը եւ իր  
ամուսինը մասնաւոր  
սենեակ մը շտկեցին,  
որպէսզի Եղիսէ  
հոն ապրի երբ  
այդտեղէն  
անցնի:  
Սենեակին  
մէջ կար  
մահճակալ,  
սեղան, աթոռ եւ  
լուսամփոփ: Այս  
սենեակը միայն  
Եղիսէի համար էր:




11

Եղիսէ մտածեց, թէ ինչպէս կրնայ այս զոյգին  
լաւութիւնը գնահատել: Երբ գիտցաւ, որ զաւակ  
չունէին, ան բան մը ըրաւ, որ կինը կրնար  
հաւատալ: "Գալ տարի այս ատեն դուն  
տղայ մը պիտի  
ունենաս":



12

Տարիներ ետք Նոյն պզտիկը հօրը հետ դաշտ  
գացած էր: "Գլուխս, գլուխս", պռռաց տղան:  
Երբ տղան մօրը քով բերին, ան մօրը գիրկը Նստաւ  
մինչեւ կէսօր եւ մեռաւ: Մայրը պզտիկը պառկեցուց  
Եղիսէի սենեակին անկողինին վրայ:  
Ռ՞վ կը կարծես  
կրնար օգնել  
անոր:




13

Եղիսէ՛ն ըսիր: Ճիշդ է: Ան էշը պատրաստեց եւ  
ամենաարագ ձեռով ճամբայ ելաւ անոր փնտռելու:  
Եղիսէ կնկան տունը եկաւ վեր ելաւ առանձին  
եւ Տիրոջ աղօթեց:



14

Աստուած մանչուկը կեանքի վերադարձուց: Եղիսէ կնկան կանչեց եւ ըսաւ. "Վերցուր տղուդ": Որքան ուրախ պետք էր ըլլար ան:



15



Մօտակայ Սուրիոյ մէջ կ'ապրէր բանակի հրամանատար մը, որ Նէեման կը կոչուէր: Ան գորաւոր եւ քաջարի մարդ մըն էր, բայց սոսկալի մորթի հիւանդութիւն ունէր, որ բորոտ կը կոչուէր:


16

Նէեմանի կինը պզտիկ ծառայ աղջիկ մը ունէր, որ Իսրայէլէն պատանդ բռնուած էր: Այս պզտիկ աղջիկը ըսաւ. "Եթէ միայն Նէեման մարգարէին հետ ըլլար Իսրայէլ ան անկասկած առողջացած կ'ըլլար":



17

Նէեման շուտով գնաց տեսնելու մարգարէն: Ան իր հետ առաւ արծաթ, ոսկի եւ գեղեցիկ հագուստներ իբր տուէր:



18

Եղիսէին ծառան դուրս եկաւ եւ ըսաւ. "Գնա եւ Յորդանանի գետին մէջ եօթը անգամ լուացուի՛ր եւ պիտի մաքրուիս":



19

Նէեման ջղայնացաւ: Զէ՞ր կրնար իր հողին Սուրիոյ մաքուր ու զուլալ գետին մէջ լուացուիլ: Զայրացած ան տորէն իր տունը դարձաւ:



20



Բարեբախտաբար, Նեեմանի ծառաները անոր գետ տարին եւ հնազանդեցան Եղիսէի հրամանին: Ուրեմն Նեեման եօթը անգամ իջաւ եւ ելաւ Յորդանանի գետին մէջ եւ ան առողջացաւ:

21



Այդկէ ետք Նեեման պաշտեց իրաւ Աստուածը, Եղիսէին Աստուածը, Տէրը, որ իրեն փորոտութենէ մաքրեց:

22



Աստուած օգտագործեց իր ծառան Եղիսէն Լոյսիսկ իր մահէն ետք: Օր մը մարդ մը թաղուեցաւ Լոյն քառայրին մէջ, որ Եղիսէն թաղուած էր երկար ժամանակ առաջ:

23



Երբ մեռած մարդուն մարմինը դպաւ մարգարէին ոսկորներուն, մարդը վերապրեցաւ եւ ոտքի ելաւ: Իրաւ, Աստուած իր հզօր ուժը ցոյց տուաւ իր հաւատարիմ ծառային Եղիսէի միջոցով:

24

Եղիսէն, հրաշքներու մարդը  
Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

2 Թագաւորաց 2 - 13

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

